էին, որք միանգամ անդ դիպեցան, առ հասարակ թողին եւ փախեան, եւ ելին արտաքս ի տաճարէ անտի»(2):

Ուրեմն Դ դարուն արդէն Հայերը բաղմական (գորգ) կը գործածէին ճաշի ատեն անոնց վրայ նստելով: Փաւստոսի նկարագրած այս դէպքը կը պատահի 347ին: Պապ եւ Աթանագինէս արքունի մօրմէ երկուորեակներ ըլլալով բնական է խորհիլ որ Հայ արքունեաց մէջ գորգ կը սփռուէր, անոր վրայ սեղան սարքելու համար: Փաւստոս աւելի որոշ վկայութիւն ունի այս մասին:

Ըստ Փաւստոսի՝ 369ին Դրաստամատ Հայ իշխանը Պարսից Շապուհ արքայէն թոյլտուութիւն կը խնդրէ Պարսից Անյուշ բերդին մէջ բանտարկուած Հայոց Արշակ Բ թագաւորին այցելելու: «Տուր ինձ հրաման, զի երթայց տեսից զընակ տէրն իմ զԱրշակ արքայ Հայոց: Եւ առ մի օր, իբրեւ ես երթայց առ նա, հրաման տուր՝ արձակել զնա ի կապանացն, եւ ես իշխեցից լուանալ զգլուխ նորա եւ օծանել, եւ ազուցանել նմա պատմուճան, եւ արկանել նմա բազմականս, եւ դնել առաջի նորա խորտիկս, եւ տալ նմա գինի... (Դրաստամատ կը ստանայ Շապուհի թոյլտուութիւնը)... եւ արձակեաց զԱրշակ ի կապանացն.... եւ լուաց զգլուխ նորա, եւ լոգացոյց զանձն նորա: Եւ ազոյց նմա պատմուճան ազնիւ. եւ էարկ նմա բազմականս, եւ բազմեցոյց զնա. եւ եդ առաջի նորա ընթրիս ըստ օրինաց թագաւորաց, եւ եդ առաջի նորա գինի որպէս օրէն էր թագաւորացն... (սակայն դժբախտ Արշակ)... զդանակն՝ զոր ունէր ի ձեռինն, որով զմիրգն կամ զամիճն կամէր ուտել, եհար ի սրտի իւրում. եւ անդէն սատակեցաւ, եւ մեռաւ անդէն ի նմին ժամուն մինչ դեռ կայր ի բազմականին»(3):

Հոս որոշ է վկայութիւնը: «Ըստ օրինաց թագաւորաց» անշուշտ Հայոց, սովորութիւն էր արկանել բազմականս եւ յետոյ դնել առաջի նորա խորտիկս: Տեսանք որ Դրաստամատ էարկ բազմականս, եւ եդ առաջի նորա ընթրիս: Բազմականը կամ գորգը ուրեմն կը փռուէր, կը սփռուէր (էարկ, արկանել) վրան խորտիկ, գինի, սեղան դրուելու համար: Ատոր համար է որ բազմական ունեցած է ուրիշ հոմանիշ մը՝ արկանելի:

Փաւստոս, մեր ազգագրական ամենաճոխ եւ մեծարժէք այս թանգարանը, ունի մեր նիւթին համար ուրիշ թանկագին վկայութիւններ ալ: Երբ Դ դարուն Հայոց Մանուէլ սպարապետը իր յանդիմանագիրը կը ղրկէր մեր Վարազդատ թագաւորին, կը յիշէր ըստ Փաւստոսի.

(2) Պատ. Հայոց: – Վենետիկ, 1914, էջ 69: Ան կը շարունակէ ըսելով որ չանթահար «Պապ եւ Աթանագինէս երկոքեան եղբարքն այսպէս սատակեցան. անկեալ զնէին ի ներքոյ եպիսկոպոսանոցին ի տեղւոջն բազմականացն»: (Անդ, էջ 70):

(3) Անդ, էջ 262–3: Պրոկոպիոս ալ կը պատմէ այս վէպը, եւ բազմականի տեղ կը գործածէ խշտական անկողին, ըստ Անգլ. թարգմանութեան կատարուած ուղղակի յունաբէն բնագրէն: Այս մասին տես իմ աշխատութիւնս ՄՇԱԿՈՑԹ պարբերաթերթ, Փարիզ, 1937, թիւ 10, «Պրոկոպիոս եւ Փաւստոս Բիւզանդ»:

Բնագիրներու մէջ կատարուած ընդգծումները բոլորն ալ իմս են: